

Ի Մ Խ Ո Ս Ք Ը

«Էջմիածին» հանդեսի խմբագրությունը պ. Արշակ Ալպոյաճյանի այս նամակը տպագրելուց առաջ հաճել էր ինձ ուղարկել կարդալու և ասելու իմ խոսքը:

Նս շատ բան շունեմ ասելու կամ բանավեճ սկսելու հարգելի նամակագրի հետ: Ստեփաննոս Սալմաստեցուն իբր անմիջապես հաջորդող Ստեփաննոս Առնշեցի կոչված կաթողիկոսի գոյությունը ինձ համար կատարելապես նորություն էր: Նրա անունը հայոց կաթողիկոսների ցուցակներում ոչ մի տեղ չի հիշատակված, թեև ուղ որպես աթոռակից: Նրա մասին տեղեկություն չունի և մի այնպիսի բազմահրմուտ հեղինակ, ինչպիսին Օրմանյանն է: Եթե այժմ մեր բանասիրության մեջ նրան է հիշել և հաստատվում է 16-րդ դարում նվրոպայում իրեն կաթողիկոս անվանող մի այդպիսի անձնավորություն, ապա այդ Չըպլախը, իմ կարծիքով, եղել

է մի ինքնակոչ և «կեղծ խոստումներ» անող մի մարդ: Վերջապես այդ ինչ կաթողիկոս է, որի մասին տեղեկություն չունի նույնիսկ էջմիածինը: Գալով Ստեփաննոս Սալմաստեցու 1551 թ. նվրոպայից Ղրիմի վրայով էջմիածին վերադառնալուն, այդ տեղեկությունն անուված է Օրմանյանից, որ ասում է՝ «Սալմաստեցին իր ուղևորությունը շարունակեց ցամաքի ճամպայով և Կաֆա... հանդիպելով՝ էջմիածին դարձավ 1551 տարվա մեջ» («Ազգապատում» բ. էջ 2241):

Գ. ԼԵՎՈՆՅԱՆ

Խմբագրությունը սպառված է համարում այս նյութի շուրջը եղած մտքերի փոխանակությունը:

ԽՄԲ.